102.0066.130202

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

,,13,, 02 2002 Թ.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԹԻՎ 10202028

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

13 փետրվարի 2002 թվականի N 66

ՊԱՐՏԱՊԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՅԻՆ

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԻ ԵՎ ՔԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՁԵՎԸ ԵՎ

ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30 հոդվածի 2-րդ մասի՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել պարտապանին սեփականության իրավունքով պատկանող գույքի եւ գույքային իրավունքների կազմի եւ քանակի մասին հայտարարագրի ձեւը եւ ներկայացման կարգը:

2. Հաստատել պարտապանին սեփականության իրավունքով պատկանող գույքի եւ գույքային իրավունքների կազմի եւ քանակի մասին հայտարարագրի լրացման կարգը:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության

արդարադատության նախարարի

«13» փետրվարի 2002թ.

N 66 հրամանով

ԿԱՐԳ

ՊԱՐՏԱՊԱՆԻՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԻ ԵՎ ՔԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ ՎԵՐՑՆԵԼՈՒ

1. Սույն կարգով սահմանվում է ՀՀ Արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության հարկադիր կատարողի կողմից կատարողական վարույթ հարուցելուց հետո պարտապանից՝ նրան սեփականության իրավունքով պատկանող գույքի եւ գույքային իրավունքների կազմի եւ քանակի մասին հայտարարագիր վերցնելու կարգը:

2. Հարկադիր կատարողը կատարողական վարույթ հարուցելուց հետո 10 օրվա ընթացքում պարտապանից հայտարարագիր է վերցնում սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի եւ գույքային իրավունքների մասին:

3. Պարտապան իրավաբանական անձից հարկադիր կատարողը հայտարարագիրը ընդունում է գործադիր տնօրենից /նախագահից/ կամ այլ լիազորված անձից: Վերջինս պարտավոր է հայտարարագրի հետ ներկայացնել նաեւ կազմակերպության գործունեության վերջին հաշվեկշիռը:

4. Հարկադիր կատարողը հայտարարագիր չի վերցնում՝

- ոչ գույքային բնույթի կատարողական վարույթներով,

- եթե պարտապանը մինչեւ հայտարարագիր տալը սույն կանոնակարգով սահմանված ժամկետում կամավոր կատարել է կատարողական թերթի պահանջը.

- մինչեւ 50.000 դրամի չափով գույքային բնույթի բռնագանձման վերաբերյալ կատարողական վարույթներով:

(4-րդ կետը փոփ. 03.05.06 թիվ 76-Ն հրաման)

5. Հետախուզման մեջ գտնվող պարտապան ֆիզիկական կամ իրավաբանական անձանցից

հարկադիր կատարողը հայտարարագիր վերցնում է նրանց հայտնաբերելուց 3 օրվա ընթացքում:

6. Հայցի ապահովման կատարողական վարույթներով պարտապանից հայտարարագիր ընդունելուց հետո, եթե նույն գործով դատարանը վճիռ է կայացրել եւ ԴԱՀԿ ծառայության նոր կատարողական թերթ է ստացվել, ապա պարտապանից հարկադիր կատարողը նոր հայտարարագիր չի վերցնում:

7. Հայտարարագիրը ստանալուց հետո, եթե պարզվի, որ հայտարարատուն սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի եւ գույքային իրավունքների կազմի եւ քանակի մասին հայտարարագրում նշված տվյալները թաքցրել կամ խեղաթյուրել է, հարկադիր կատարողը նախապատրաստում է նյութեր եւ օրենքով սահմանված կարգով լուծում դրանց ընթացքը:

8. Պարտապանից հայտարարագիր ընդունել միայն սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելուց հետո հարուցված կատարողական վարույթներով:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության

արդարադատության նախարարի

«13» փետրվարի 2002թ.

N 66 հրամանով

ԿԱՐԳ

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՎ ՊԱՐՏԱՊԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՄ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ

ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԼՐԱՑՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է կատարողական վարույթով իրավաբանական կամ ֆիզիկական անձանց սեփականության /համասեփականության/ իրավունքով պատկանող գույքի եւ գույքային իրավունքների մասին հայտարարագրի լրացման կարգը:

2. Հայտարարագրի ցուցանիշերն ամբողջական լրացված են համարվում, եթե.

ա/ սահմանված բաժիններից յուրաքանչյուրում լրացված վերջին տողին հաջորդ չլրացված տողի կամ որեւէ չլրացված բաժնի 1-ին տողի 2-րդ սյունակում դրված է գծիկ.

բ/ հայտարարագրի բոլոր էջերի վերջում դրված է հայտարարատուի ստորագրությունը.

գ/ հայտարարագրերում գրանցումները կատարված են գրիչով, իսկ կատարված ուղղումները վավերացված են հայտարարատուի ստորագրությամբ:

3. Հայտարարատուներին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող գույքը յուրաքանչյուր հայտարարատուի կողմից հայտարարագրում նշվում է իր բաժնեմասի չափով:

4. ՓԲԸ, ԲԲԸ, ՍՊԸ-ի /գործադիր տնօրեն, նախագահ/ ղեկավար աշխատող հայտարարատուների կողմից հայտարարագիրը լրացվում է հետեւյալ կարգով.

ա/ «1. Հայտարարատուի անունը, ազգանունը, հայրանունը» տողում լրացվում է հայտարարատուի անունը, ազգանունը, հայրանունը /լրիվ/.

բ/ «2. Աշխատանքի վայրը, ղեկավար աշխատողի պաշտոնը» տողում լրացվում է հայտարարատուի աշխատանքի վայրի լրիվ անվանումը, հայտարարատուի զբաղեցրած

պաշտոնը.

գ/ «4. Հասցեն» տողում լրացվում է ՓԲԸ, ԲԲԸ, ՍՊԸ-ի գտնվելու վայրի հասցեն եւ հեռախոսահամարը:

5. «Շենքեր եւ շինություններ» բաժինը լրացվում է հետեւյալ կարգով.

ա/ 2-րդ «Գտնվելու վայրը /հասցեն/» սյունակում լրացվում է հայտարարատուին պատկանող շենքերի եւ շինությունների գտնվելու վայրը /հասցեն/.

բ/ 3-րդ «Բնակելի, հասարակական, արտադրական, այլ» սյունակում լրացվում է 2-րդ սյունակի համապատասխան տողում նշված հայտարարատուին պատկանող շենքերի եւ շինությունների բնակելի /մարդկանց բնակության համար նախատեսված՝ բնակելի եւ օժանդակ մասերից բաղկացած, կոմունալ հարմարություններով օժտված/, հասարակական /բնակչության սոցիալական սպասարկման, ինչպես նաեւ վարչական ու հասարակական կազմակերպությունների տեղակայման համար նախատեսված/ եւ արտադրական /արդյունաբերական, գյուղատնտեսական եւ տնտեսության մյուս ճյուղերի արտադրությունների տեղակայման եւ դրանց մեջ տեխնոլոգիական սարքավորումների շահագործման համար անհրաժեշտ պայմաններն ապահովող/ կամ այլ/ լինելը.

գ/ 4-րդ՝ «Գույքի նկատմամբ իրավունքը» սյունակում լրացվում է 2-րդ սյունակի համապատասխան տողում նշված, հայտարարատուին պատկանող շենքի եւ շինության նկատմամբ իրավունքը՝ միանձնյա սեփականության, ընդհանուր համատեղ սեփականության, ընդհանուր բաժնային սեփականության: Ընդ որում, ընդհանուր համատեղ սեփականության դեպքում նշվում է նաեւ համասեփականատերերի թիվը.

դ/ 5-րդ «չափը /քմ/» սյունակում լրացվում է 2-րդ սյունակի համապատասխան տողում նշված, հայտարարատուին պատկանող շենքի եւ շինության տարածքը՝ քառակուսի մետրերով:

6. «Հողամասեր» բաժինը լրացվում է հետեւյալ կարգով՝

ա/ 2-րդ «Գտնվելու վայրը /հասցեն/» սյունակում լրացվում է հայտարարատուին պատկանող յուրաքանչյուր հողամասի գտնվելու վայրը /հասցեն/՝ առանձին-առանձին.

բ/ 3-րդ «Հողամասի տեսակը» սյունակում լրացվում է 2-րդ սյունակի համապատասխան տողում նշված, հայտարարատուին պատկանող հողամասի տեսակը /տնամերձ, գյուղատնտեսական, ոչ գյուղատնտեսական/.

գ/ 4-րդ «Գույքի նկատմամբ իրավունքը» սյունակում լրացվում է 2-րդ սյունակի համապատասխան տողում նշված, հայտարարատուին պատկանող հողամասի նկատմամբ իրավունքը՝ միանձնյա սեփականության, ընդհանուր համատեղ սեփականության, ընդհանուր բաժնային սեփականության, անհատույց օգտագործման կամ վարձակալության:

Ընդ որում, ընդհանուր համատեղ սեփականության դեպքում նշվում է նաեւ համասեփականատերերի թիվը.

դ/ 5-րդ՝ «Չափը /հա/» սյունակում լրացվում է 2-րդ սյունակի համապատասխան տողում նշված, հայտարարատուին պատկանող հողամասի չափը հեկտարով:

7. «Այլ անշարժ գույք» բաժինը լրացվում է հետեւյալ կարգով՝

ա/ 2-րդ «Գտնվելու վայրը /հասցեն/» սյունակում լրացվում է հայտարարատուին պատկանող յուրաքանչյուր այլ անշարժ գույքի գտնվելու վայրը /հասցեն/՝ առանձին-առանձին.

բ/ 3-րդ՝ «Անվանումը» սյունակում լրացվում է 2-րդ սյունակի համապատասխան տողում նշված, հայտարարատուին պատկանող այլ անշարժ գույքի անվանումը՝ բացառությամբ 1-ին եւ 2-րդ բաժիններում նշվածների.

գ/ 4-րդ «Գույքի նկատմամբ իրավունքը» սյունակում լրացվում է 2-րդ սյունակի համապատասխան տողում նշված, հայտարարատուին պատկանող այլ անշարժ գույքի նկատմամբ իրավունքը՝ միանձնյա սեփականության, ընդհանուր համատեղ սեփականության, ընդհանուր բաժնային սեփականության: Ընդ որում, ընդհանուր համատեղ սեփականության դեպքում նշվում է նաեւ համասեփականատերերի թիվը.

դ/ 5-րդ՝ «Չափը /հա/» սյունակում լրացվում է 2-րդ սյունակի համապատասխան տողում նշված, հայտարարատուին պատկանող այլ անշարժ գույքը՝ չափման համապատասխան միավորներով:

8. «Փոխադրամիջոցներ» բաժինը լրացվում է հետեւյալ կարգով՝

ա/ 2-րդ «Անվանումը եւ մակնիշը» սյունակում լրացվում է հայտարարատուին պատկանող փոխադրամիջոցի /ավտոմոբիլային տրանսպորտի միջոց, անվավոր, թրթուրավոր, ինքնագնաց մեքենաներ կամ մեխանիզմներ, օդային եւ ջրային փոխադրամիջոցներ/ լրիվ անվանումը եւ մակնիշը.

բ/ 3-րդ «Թողարկման տարեթիվը» սյունակում լրացվում է 2-րդ սյունակի համապատասխան տողում նշված, հայտարարատուին պատկանող փոխադրամիջոցի թողարկման /արտադրության/ տարեթիվը.

գ/ 4-րդ «Գույքի նկատմամբ իրավունքը» սյունակում լրացվում է 2-րդ սյունակի համապատասխան տողում նշված, հայտարարատուին պատկանող փոխադրամիջոցի նկատմամբ իրավունքը՝ միանձնյա սեփականության, ընդհանուր համատեղ սեփականության, ընդհանուր բաժնային սեփականության, անհատույց օգտագործման կամ վարձակալության:

Ընդ որում, ընդհանուր համատեղ սեփականության դեպքում նշվում է նաեւ համասեփականատերերի թիվը:

9. «Պարտատոմսեր, բաժնետոմսեր, այլ ներդրումներ» բաժինը լրացվում է հետեւյալ կարգով՝

ա/ 3-րդ «Կազմակերպությունը» սյունակում լրացվում է հայտարարատուին պատկանող պարտատոմսը, բաժնետոմսը, արժեթուղթը /բանկային վկայագիրը/ թողարկողի լրիվ անվանումը, կամ կազմակերպությունը, որի կանոնադրական /բաժնեհավաք/ կապիտալում ներդրում է կատարել հայտարարատուն.

բ/ 4-րդ «Տեսակը» սյունակում լրացվում է 2-րդ սյունակի համապատասխան տողում նշված, հայտարարատուին պատկանող՝

- պարտատոմսի տեսակը՝ պարտատոմս ըստ ներկայացնողի կամ պարտատոմս անվանական, կամ պարտատոմս գրավով ապահովված, պարտատոմս երաշխավորությամբ

ապահովված, կամ պարտատոմս առանց ապահովման, կամ այլ բաժնետոմս,

- բաժնետոմսի տեսակը՝ բաժնետոմս ըստ ներկայացնողի կամ բաժնետոմս անվանական, կամ բաժնետոմս ազատ շրջանառու, կամ բաժնետոմս սահմանափակ շրջանառու, կամ բաժնետոմս հասարակ, կամ բաժնետոմս արտոնյալ, կամ այլ բաժնետոմս,

- այլ արժեթուղթ,

- այլ ներդրում կանոնադրական կապիտալում կամ բաժնեհավաք կապիտալում.

գ/ «Անվանական արժեք» սյունակում լրացվում է 2-րդ սյունակի համապատասխան տողում նշված հայտարարատուին պատկանող պարտատոմսի, բաժնետոմսի, այլ արժեթղթի մեկ հատի անվանական արժեքը՝ Հայաստանի Հանրապետության դրամով կամ արտարժույթով: Անվանական արժեք չունեցող արժեթղթերի դեպքում 5-րդ սյունակում դրվում է «-» նշանը:

10. «Չեկեր, մուրհակներ» բաժինը լրացվում է հետեւյալ կարգով՝

ա/ 3-րդ «Տեսակը» սյունակում լրացվում է 2-րդ սյունակի համապատասխան տողում նշված, հայտարարատուին պատկանող՝

չեկի տեսակը՝ չեկ անվանական կամ չեկ օրդերային, կամ չեկ ըստ ներկայացնողի, կամ այլ չեկ,

մուրհակի տեսակը՝ մուրհակ հասարակ կամ մուրհակ փոխանցելի /վճարագիր/.

բ/ 4-րդ «Արժեքը» սյունակում լրացվում է 2-րդ սյունակի համապատասխան տողում նշված, հայտարարատուին պատկանող չեկում կամ մուրհակում նշված գումարը՝ Հայաստանի Հանրապետության դրամով կամ արտարժույթով:

11. «Մշակութային արժեքներ եւ հնաոճ իրեր» բաժինը լրացվում է հետեւյալ կարգով՝

ա/ 2-րդ «Արժեքի անվանումը» սյունակում լրացվում է 2-րդ սյունակի համապատասխան տողում նշված, հայտարարատուին պատկանող մշակութային արժեքների եւ հնաոճ իրերի անվանումը՝ առանձին-առանձին:

բ/ 3-րդ «Ստեղծման ժամանակաշրջանը» սյունակում 2-րդ սյունակի համապատասխան տողում նշված, հայտարարատուին պատկանող մշակութային արժեքներից եւ հնաոճ իրերից յուրաքանչյուրի ստեղծման ժամանակաշրջանը կամ դարը, կամ տարեթիվը.

գ/ 5-րդ «Ծանոթություն» սյունակում լրացվում է 2-րդ սյունակի համապատասխան տողում նշված, հայտարարատուին պատկանող մշակութային արժեքներից եւ հնաոճ իրերից յուրաքանչյուրի հեղինակի անունը, ազգանունը /կեղծանունը/:

12. «Դրամական միջոցներ» բաժինը լրացվում է հետեւյալ կարգով՝

«Դրամական միջոցներ» սյունակում լրացվում են հայտարարատուին պատկանող դրամական միջոցները /Հայաստանի Հանրապետության դրամը կամ արտարժույթը/՝ առանձին տողերով /թվերով կամ բառերով/:

13. «Տնային կենդանիներ» բաժինը լրացվում է հետեւյալ կարգով՝

«Տեսակներ» սյունակում լրացվում են տնային կենդանիների տեսակների անվանումը.

ա /խոշոր եղջերավոր անասուններ՝ /կովեր, եզներ, գոմեշներ, մոզիներ, հորթեր, ձիեր/:

բ/ մանր եղջերավոր անասուններ /ոչխարներ, այծեր/.

գ/ այլ տնային կենդանիներ, խոզեր, խոճկորներ, թռչուններ.

դ/ «Քանակը» սյունակում լրացվում է 2-րդ սյունակի համապատասխան տողում նշված տնային կենդանիների քանակը.

ե/ «Ծանոթություն» սյունակում լրացվում է 2-րդ սյունակում նշված կենդանիների տարիքը, մոտավոր քաշը եւ արժեքը:

14. «Գյուղմթերքներ» բաժինը լրացվում է հետեւյալ կարգով.

ա/ «Անվանումը» բաժնում լրացվում է գյուղմթերքների անվանումը /տեսակը/ ցորեն, գարի, ծիրան, կարտոֆիլ եւ այլն/.

բ/ «Չափի միավորը» սյունակի համապատասխան տողում նշվում է համապատասխան տեսակի գյուղմթերքի քանակը /կգ, տոննա/:

15. «Աշխատավարձ, նպաստներ, կենսաթոշակներ, կրթաթոշակներ» բաժինը լրացվում

է հետեւյալ կարգով՝

ա/ «Տեսակը» սյունակում լրացվում է հայտարարատուի յուրաքանչյուր ամիս ստացվող դրամական փոխհատուցման տեսակը /աշխատավարձ, նպաստ, կենսաթոշակ, կրթաթոշակ/:

բ/ «Գումարի չափը» սյունակում լրացվում է 2-րդ սյունակի համապատասխան տողում նշված դրամական փոխհատուցման տեսակի չափը:

Ծանոթություն.

- Եթե ամուսինները գույքը ձեռք են բերել համատեղ ամուսնական կյանքի ընթացքում, ապա հայտարարագրում «Ծանոթություն» սյունակում կատարել համապատասխան նշումներ:

- Եթե հայտարարագրի բաժիններից որեւէ մեկի տողերի թիվը բավարար չէ հայտարարագրման ենթակա բոլոր տեղեկությունները լրացնելու համար, ապա դրանք լրացվում են այդ բաժինն ընդգրկող նույնօրինակ /պատճենված/ ձեւաթղթերի վրա:

- «Ծանոթություն» հատվածում նշվում են սույն հայտարարագրի լրացման ժամանակ նախորդ էջերում չտեղավորված կամ բաց թողնված մանրամասները, ինչպես նաեւ հայտարարատուի հայեցողությամբ լրացուցիչ բացատրության կարիք ունեցող տեղեկատվությունը:

16. «Վերջին վեց ամիսների ընթացքում օտարված անշարժ գույք եւ տրանսպորտային միջոցներ» բաժինը լրացվում է հետեւյալ կարգով.

ա/ 2-րդ «գտնվելու վայրը» սյունակում լրացվում է վերջին վեց ամիսների ընթացքում հայտարարատուի կողմից օտարված անշարժ գույքի գտնվելու վայրը.

բ/ 3-րդ «բնակելի /հասարակական, արտադրական եւ այլ/ հողամաս, տրանսպորտի տեսակը» սյունակում լրացվում է 2-րդ սյունակի համապատասխան տողում նշված օտարված անշարժ գույքի տեսակը, տրանսպորտային միջոցի մակնիշը.

գ/ 4-րդ «երբ է վաճառվել, տարին, ամիսը, գնորդի անուն, ազգանուն, բնակության կամ հաշվառման վայրը» սյունակում լրացվում է անշարժ գույքի, տրանսպորտային միջոցի օտարման օրը, գնորդի անունը, ազգանունը, բնակության կամ

հաշվառման վայրը» առանձին-առանձին.

դ/ 5-րդ «վաճառքի գինը» սյունակում լրացվում է օտարված անշարժ գույքի, տրանսպորտային միջոցի վաճառքի գինը /ՀՀ դրամով կամ արտարժույթով/:

(16-րդ կետը լրաց. 03.05.06 թիվ 76-Ն հրաման)

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության

արդարադատության նախարարի

«13» փետրվարի 2002թ.

N 66 հրամանով

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ՊԱՐՏԱՊԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՅԻՆ

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ, ԿԱՋՄԻ ԵՎ ՔԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

ՀՀ Արդարադատության նախարարության ԴԱՀԿ ----------

մարզային ստորաբաժանման ---------- բաժանմունքի

հարկադիր կատարող՝ _____ ղեկավարվելով

անուն, ազգանուն

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30 հոդվածի 2-րդ մասով N _____ կատարողական վարույթով՝ վերցրեցի հայտարարագիր պարտապան՝

_____-ից

անուն, ազգանուն, հասցեն /անձնագրի սերիան եւ համարը/, / իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը /հասցեն/, հայտարարագիր տվողի անունը, ազգանունը եւ պաշտոնը/

սեփականության իրավունքով նրան պատկանող գույքի, գույքային իրավունքների կազմի եւ քանակի մասին.

Պարտապան՝ _____

անունը, ազգանունը, ստորագրությունը

Հարկադիր կատարող՝ _____

հարկադիր կատարողի ազգանունը, ստորագրությունը

«_____» _____ 200 թ.

Իրավաբանական անձը ներկայացնում է վերջին հաշվեկշիռը եւ գույքացուցակը՝ ստորագրված եւ հաստատված կլոր կնիքով:

.

| ՏՎՅԱԼՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ |

1. Շենքեր եւ շինություններ

NN	Գտնվելու վայրը	Բնակելի /հասարակական, արտադրական, այլ/	Գույքի նկատմամբ իրավունքը	Չափը /քմ/
ը/կ	/հասցեն/			
1	2	3	4	5
1.				
2.				

3.				

2. Հողամասեր

NN /ը/կ	Գտնվելու վայրը /հասցեն/	Հողամասի տեսակը իրավունքը	Գույքի նկատմամբ	Չափը /հա/
1	2	3	4	5
1.				
2.				
3.				
4.				

3. Այլ անշարժ գույք

NN /ը/կ	Գտնվելու վայրը /հասցեն/	Անվանումը իրավունքը	Գույքի նկատմամբ	Չափը
1	2	3	4	5
1.				

| 2.| | | | |

|___|_____|_____|_____|_____|

| 3.| | | | |

|___|_____|_____|_____|_____|

| 4.| | | | |

|_____|

| 4. Փոխադրամիջոցներ |

|_____|

|NN |Անվանումը եւ |Թողարկման տարեթիվը |Գույքի նկատմամբ| ծանոթություն |

|ը/կ| մակնիշը | | իրավունքը | |

|___|_____|_____|_____|_____|

| 1 | 2 | 3 | 4 | 5 |

|___|_____|_____|_____|_____|

| 1.| | | | |

|___|_____|_____|_____|_____|

| 2.| | | | |

|___|_____|_____|_____|_____|

| 3.| | | | |

|___|_____|_____|_____|_____|

| 4.| | | | |

|_____|

| 5. Պարտատոմսեր, բաժնետոմսեր, այլ ներդրումներ |

|_____|

|NN |Կազմակերպության| Տեսակը | Անվանական | ծանոթություն |

|ը/կ| անվանումը | | արժեքը | |

|___|_____|_____|_____|_____|

| 1 | 2 | 3 | 4 | 5 |

1.				
2.				
3.				
4.				

6. Չեկեր, մուրհակներ

NN	Չեկեր, մուրհակը	Տեսակը	Արժեքը	ծանոթություն
ը/կ	տրամադրողը			
1	2	3	4	5
1.				
2.				
3.				
4.				

7. Մշակութային արժեքներ եւ հնաոճ իրեր

NN	Արժեքի	Ստեղծման	քանակը	ծանոթություն

Ը/կ	անվանումը	ժամանակաշրջանը		
1	2	3	4	5
1.				
2.				
3.				
4.				

8. Դրամական միջոցներ

NN Ը/կ	ՀՀ դրամ	Արտարժույթ	Գումարի չափը	ծանոթություն
1	2	3	4	5
1.				
2.				
3.				
4.				

| 9. Տնային կենդանիներ |

NN	Տեսակներ	Քանակը	ծանոթություն
ը/կ			
1	2	3	4	5
1.				
2.				
3.				
4.				

| 10. Գյուղմթերքներ |

NN	Անվանումը	Չափի միավորը /կգ,	ծանոթություն
ը/կ		տոննա/	
1	2	3	4	5
1.				
2.				
3.				

4.				

11. Աշխատավարձ, նպաստներ, կրթաթոշակներ, կենսաթոշակներ

NN ը/կ	Տեսակը	Գումարի չափը	ծանոթություն
1	2	3	4	5
1.				
2.				
3.				
4.				

12. Վերջին վեց ամիսների ընթացքում օտարված անշարժ գույք եւ տրանսպորտային միջոցներ

NN ը/կ	Գտնվելու վայրը	Բնակելի (հասարակական, արտադրական եւ այլ) հողամաս, տրանսպորտի տեսակը	Երբ է վաճառել, տարին, ամիսը, գնորդի անուն, ազգանուն, բնակության կամ հաշվառման վայրը	Վաճառքի գինը
1	2	3	4	5

|___|_____|_____|_____|_____|

| 1.| | | | |

|___|_____|_____|_____|_____|

| 2.| | | | |

|___|_____|_____|_____|_____|

| 3.| | | | |

|___|_____|_____|_____|_____|

| 4.| | | | |

._____.

Պարտապան՝ _____

անունը, ազգանունը, ստորագրությունը

Հարկադիր կատարող՝ _____

հարկադիր կատարողի ազգանունը, ստորագրությունը

«___» _____ 200 թ.

Ծանոթություն.

Պարտապանի կողմից՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի եւ գույքային իրավունքների կազմի ու քանակի մասին հայտարարագրում տվյալներ թաքցնելը կամ խեղաթյուրելը կամ հայտարարագիր ներկայացնելուց չարամտորեն խուսափելն առաջացնում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

Ծանոթացա

պարտապան՝ _____

ստորագրություն, անուն, ազգանուն

«_____» _____ 200 թ.

(հայտարարագիրը փոփ. 03.05.06 թիվ 76-Ն հրաման)